**Հավելված 2**
**2025 թ. հունվարի 23-ին**
**Կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ԱՌՀԿ7 պայմանագրի**

**Դրամաշնորհային հաշվետվություն N 1**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | **«Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»** |
| **Դրամաշնորհի N** | **«ԱՍՀՆ-ԴՄ-ԵԽՑԾ-25/7-1»**<br>**Կոտայք, ք. Հրազդան,** |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | **«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն** |
| **Միջոցառման իրականացման ժամանակահատված** | 01 հունվար, 2025թ.- 31 դեկտեմբեր, 2025թ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01 հունվար, 2025թ.- 31 մարտ, 2025թ. |
| **Ներկայացման օր** | 10.04.2025թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Մերի Գևորգյան՝ սոցիալական աշխատող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆինանսավորմամբ Կոտայքի մարզում իրականացնում է «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» ծրագիրը, որի շրջանակում մարզի՝ ԿԴԻՀ մինչև 18 տարեկան 130 երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվում են սոցիալ-հոգեբանական, կրթական, խորհրդատվական, վերականգնողական ծառայություններ:

Ծրագիրը միտված է խթանելու երեխաների սոցիալ-վերականգնողական, ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և/ կամ նրանց սոցիալական մեկուսացումը՝ խթանելով ԿԴԻՀ երեխայի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, նպաստելու համայնքի մշակութային կյանքին վերջիններիս մասնակցությանը, ինչպես նաև աջակցելու հաստատություններում խնամք ստացող երեխաների՝ ընտանիքների հետ վերամիավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի կատարման ենթակա հիմնական գործողությունները հետևյալն են՝

- Տրամադրել սոցիալական ծառայություն և խորհրդատվություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին:
- Տրամադրել առողջապահական, սոցիալական, իրավաբանական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցության և ուղղորդման ծառայություններ:
- Տրամադրել հոգեբանական խորհրդատվություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին՝ անհրաժեշտության դեպքում անհատական և խմբային պարբերական հանդիպումների միջոցով:
- Տրամադրել ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին

վերականգնողական/թերապևտիկ, խոսքային, վարքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայություններ:

- Տրամադրել ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթ:
- Տրամադրել կրթական աջակցություն ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ծնողներին, ըստ կարիքի՝ նպաստել կյանքի հմտությունների զարգացմանը:
- Կազմակերպել ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ծնողների համար մշակութային, ժամանցային և այլ բնույթի միջոցառումներ:
- Իրականացնել սոցիալ-հոգեբանական աշխատանք շուրջօրյա խնամքի 5 հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների հետ՝ ընտանիքների հետ վերամիավորման բաղադրիչի շրջանակում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**Սոցիալական աջակցություն**:

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողների կողմից տունայցերի միջոցով իրականացվել է 58 ԿԴԻՀ երեխայի առաջնային կարիքի գնահատում, որից 45 Արցախից տեղահանված և մշտադիտարկման նպատակով կարիքների վերագնահատում թվով 39 ԿԴԻՀ երեխայի, որից 26 Արցախից տեղահանված: Կարիքի գնահատման և վերագնահատման հիման վրա որոշվել է շահառուին տրամադրվող ծառայությունների շրջանակը:Գնահատումն իրականացվել է ԱՀ ԲՀԿ սոցիալական աշխատողների կողմից՝ ՄՍԾՏԿ աշխատակիցների հետ համատեղ:

Համալիր կարիքների հայտնաբերման դեպքում սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է դեպքի վարում:Սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է խորհրդատվություն, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում, կատարվել են ուղղորդումներ, իրականացվել է մշտադիտարկում և շարունակական վերահսկողություն:

Պարբերաբար իրականացվել է կարիքի վերագնահատում և անհրաժեշտության դեպքում սոցիալական ծառայությունների տեսակների տրամադրման վերանայում:

Շահառուների հետ կապը սոցիալական աշխատողի կողմից պահպանվել է կենտրոնում հանդիպումների և արտակենտրոն ծառայությունների միջոցով:Իրականացված կարիքի գնահատման հիման վրա պարբերաբար իրականցվել են բազմամասնագիտական թիմային քննարկումներ:Քննարկումների և դիտարկումների արդյունքում թվով 58 ԿԴԻՀ երեխայի համար կազմվել և 78 ԿԴԻՀ երեխայի համար վերակազմվել է անհատական սոցիալական ծրագիր:Կարևոր տեղ է հատկացվել նաև երեխայի շահից բխող պետական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի հետ համագործակցությանը:

Սերտ համագործակցություն է իրականացվել նաև երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող 5 պետական հաստատությունների հետ՝ երեխաների ընտանիքի հետ վերամիավորման նպատակով:Իրականացվել են տնայցեր շուրջօրյա խնամք տրամադրվող երեխաների ընտանիքներին, տրամադրվել է սոցիալ-հոգեբանական աջակցություն, մշտադիտարկման արդյունքում կատարվել է կարիքների գնահատում և վերագնահատում, ընտանիքի անդամներին տրամադրվել է հոգեբանական աջակցություն՝ հուզական հոգեվիճակների կայունացման, իրավիճակի ճիշտ գնահատման նպատակով:Նաև համագործակցություն է իրականացվել ՀՀ Կոտայքի մարզի Մարզպետի աշխատակազմի սոցիալական ոլորտի հարցերի վարչության աշխատակազմաի, ՍՕՍ մանկական գյուղերի սոցիալական աշխատակիցների, <<Երևանի <<Մանկական տուն>> ՊՈԱԿ-ի տնօրենի,ինչպես նաև աշխատակիցների, անձանց ովքեր ներգրավված են ընտանիքների խնդիրների լուծման հարցում : Իրականացվել է թվով 41 արտաքին ուղղորդում, որից 31 Արցախից տեղահանված երեխայի և ծնողի:Ուղղորդվել են հետևյալ կառույցներ՝ Հրազդանի ԲԿ, <<Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն>> ՀԿ, Կոտայքի մարզի հանրային պաշտպանի գրասենյակ,Հրազդանի անձնագրային բաժին, Հրազդանի ՄՍԾՏԿ, <<Կարմիր Խաչ>>-ի Հրազդանի գրասենյակ:

**Առողջապահական, սոցիալական, իրավաբանական և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցության և ուղղորդման ծառայություններ:**

Իրականացվել է թվով 41 արտաքին ուղղորդում, որից 31 Արցախից տեղահանված երեխայի և ծնողի:Ուղղորդվել են հետևյալ կառույցներ՝ Հրազդանի ԲԿ, <<Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն>> ՀԿ, Կոտայքի մարզի հանրային պաշտպանի

գրասենյակ,Հրազդանի անձնագրային բաժին, Հրազդանի ՄՍԾՏԿ:
Թվով 1 ԿԴԻՀ երեխա ուղղորդվել է Հրազդանի ԲԿ՝ նյարդաբանի հետազոտության նպատակով:
Թվով 1 ԿԴԻՀ երեխա ուղղորդվել է Հրազդանի ԲԿ՝ ընդհանուր հետազոտության նպատակով:Հետազոտվել է, ստացել է բուժում:
Թվով 2 ԿԴԻՀ երեխա ուղղորդվել է Հրազդանի ԲԿ՝ ակնաբույժի հետազոտության նպատակով,որից 1՝ ԿԴԻՀ երեխա հետազոտվել է,ստացել է բուժում:
Թվով 7 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է <<Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն>> ՀԿ՝ մասնակցելու մասնագիտական հմտություններ ձեռք բերելու դասընթացներին,որից 4 ԿԴԻՀ երեխայի ծնող անցել են մասնագիտական ուսուցում,
3 ԿԴԻՀ երեխայի ծնող սպասման մեջ է:
Թվով 3 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է <<Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն>> ՀԿ՝ հագուստ ստանալու նպատակով,որից 2 ԿԴԻՀ երեխայի ծնող ստացել է:
Թվով 3 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է Հրազդանի ՄՍԾՏԿ՝ Ֆունկցիոնալության վերագնահատման համար: Թվով 1 ԿԴԻՀ երեխայի ուղղորդումը հաստատված է:
Թվով 1 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է Հրազդանի ՄՍԾՏԿ՝ ԼՂ տեղահանվանված անձանց տրամադրվող աջակցության վերականգման նպատակով: ՈՒղղորդումը հաստատվել է:
Թվով 3 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է Հրազդանի ՄՍԾՏԿ՝ մշտական աշխատանք ունենալու նպատակով:
Թվով 1 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է Հրազդանի ՄՍԾՏԿ՝ ընտանեկան նպաստ համակարգում հաշվառվելու նպատակով:ՈՒղղորդումը հաստատվել է՝ ընտանիքը ընդգրկվել է նպաստ համակարգվում:
Թվով 6 ԿԴԻՀ երեխայի ծնող ուղղորդվել է Հրազդանի ՄՍԾՏԿ՝ էլեկտրոնային քարտերից օգտվելու նպատակով,որից 1 ԿԴԻՀ երեխայի ծնող ստացել է:
Թվով 9 ԿԴԻՀ երեխայի ծնողը ուղղորդվել է Հրազդանի անձնագրային բաժին՝ քաղաքացիություն ձեռք բերելու և բնակապահովության ծրագրից օգտվելու նպատակով:
Թվով 1 ԿԴԻՀ երեխայի ծնողը ուղղորդվել է Կոտայքի մարզի հանրային պաշտպանի գրասենյակ խորհրդատվության նպատակով:Դիմել է, ստացել է իրավաբանական խորհրդատվություն:
Թվով 1 ԿԴԻՀ երեխայի ծնողը ուղղորդվել է <<Կարմիր Խաչ>>-ի Հրազդանի գրասենյակ՝ տակդիր ստանալու նպատակով:Ստացել է:

Իրականացված ուղղորդումները նպաստում են երեխաների հետ աշխատանքի կանոնակարգվածությանը: Ըստ փաստաթղթային հիմնավորման՝ հիմնախնդրային իրավիճակի ամբողջական գնահատմանը,ԿԴԻՀ երեխաների արտադպրոցական զբաղվածության ապահովմանը, նրանց ընտանիքների կյանքի որակի բարելավմանը, իրավունքների վերականգնմանը:

**Հոգեբանական աջակցություն:**

Հաշվետու ժամանակահատվածում թվով 37, որից 5 Արցախից տեղահանված ԿԴԻՀ երեխաներին և նրանց ծնողներին տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն: Իրականացվել են հոգեբանական անհատական և խմբային պարբերական հանդիպումներ, որոնք նպատակ ունեն շահառուների հոգեբանական բարեկեցության ապահովումը: Հանդիպումների շրջանակներում աշխատանք է տարվել տարբեր հոգեբանական խնդիրների հաղթահարման ուղղությամբ, ներառյալ՝ անհանգստության, վախերի, անձնային բարդույթների, շփման և ինքնարտահայտման դժվարությունների, սոցիալական ինտեգրման խոչընդոտների, տարիքային ճգնաժամերի, ագրեսիայի կառավարման, լարվածության և խուճապային գրոհների նվազեցման, ինչպես նաև ծնող-երեխա հարաբերությունների բարելավման և ամրապնդման ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվել հոգեբանական կայունության ձևավորմանը, ինքնավստահության զարգացմանը, սթրեսակայունության ամրապնդմանը և հուզական ինքնակարգավորման հմտությունների զարգացմանը:

- ✓ Կենտրոնում խմբային ձևաչափով հոգեբանական աջակցություն է ստացել 12 ԿԴԻՀ երեխա:




- ✓ Անհատական հոգեբանական աջակցություն է տրամադրվել 32, որից 5 Արցախից տեղահանված ԿԴԻՀ երեխաներին և նրանց ծնողներին:

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ևս ընտանիքների տեղափոխությունների արդյունքում տրամադրվող ծառայությունները կիսատ մնալու ռիսկ է առաջանում, խնդրի լուծման համար իրականացվում է ուղղորդում տվյալ մարզում գործող նմանատիպ՝ նույն դրամաշնորհի շրջանակներում ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություն:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվում է շարունակական աշխատանք ԿԴԻՀ մինչև 18 տարեկան երեխաներին և նրանց ընտանքիներին տրամադրելու հետևյալ ծառայությունները

- Սոցիալական ծառայություն և խորհրդատվություն,
- Հոգեբանական աջակցություն երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին,
- Սոցիալական,առողջապահական, և կրթական հարցերի շուրջ խորհրդատեղեկատվական աջակցություն և ուղղորդում երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին,
- Վերականգնողական/ թերապևտիկ ծառայություններ,
- Կրթական աջակցություն երեխաներին և նրանց ընտանիքի անդամներին, նպաստել կյանքի հմտությունների զարգացմանը,
- «Ցերեկային խնամքի կենտրոնում և/կամ դրանից դուրս գտնվելու որոշակի ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող երեխաներին ըստ անհրաժեշտության ուղեկցողի» ծառայություն:
- Սոցիալ-հոգեբանական աշխատանք շուրջօրյա խնամքի 4 հաստատություններում խնամվող  երեխաների և նրանց ընտանիքների հետ՝ ընտանիքների հետ վերամիավորման բաղադրիչի շրջանակում: